

**ԲՆԱԳՐԵՐ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԵՐ**
TEXTES ET ETUDES

ԺԼ. ԴԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԼԵԶՈՒԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

ԺԼ. դարի վերանորոգությ գեղարուեսական գրականութեան նոր ընթացքին համակշիռ՝ վերափոխում է նաև գրական երկի լեզուն։ Հին եւ միջին դարերի հայոց զասական գրականութեան ու արուեստի աւանդների վերափոշման եւ միաժամանակ հնից դէպի նորը անցման մի շրջան է ակսում հայոց ողջ գեղարուեստական դրականութեան համար, ինչպէս նաեւ հին, զասական հայերէնի՝ դրաբարի վերակոչման եւ միաժամանակ հնից դէպի նորը անցման մի իւրատեսակ շրջան է ակսում գեղարուեստական գրականութեան լեզուի, գրական հայերէնի համար։ Ահա թէ ինչո՞ւ ժԼ. դարի գրական ստեղծագործութիւնը չունի (եւ չը կարող ունենալ) լեզուի կուռ, ընդհանրական պատկեր, լեզուամտածոլութեան մի միասնական համակայտ։ Ընդհանրական պատկեր, լեզուամտածոլութիւնը։ Այս երեւոյթը, այլ կերպարանքով, կար նաեւ նախապէս, մանաւանդ ժԲ. եւ ժէ. դարերի առաջին կիսում։ ԺԼ. դարում, տակայն, հայոց կրօնական-ազգային վերապարբնող կեանքի բուռն շրջանում, վճռական-օրէն առաջ է քաշում հայ ինի եւ նոր լեզումերի գործնական դերի բարձրացման խնդիրը եւ նոր ուղիներ են մշակում նրանց զարգացման համար։ Խակ ո՞րն էր գրական լեզուի անհանգատացնող իրավիճակը, ինչը պէտք էր ակտել, որտեղի՞ց վերցնել գրական լեզուի զարգացման, լեզուաշխնարարութեան ուղղութիւնը։ Յայնի է, որ ժԼ. դարում եւս լատինարանութիւնը լուրջ վտանգ էր սպառնում։ Հայոց ճոխ, վահմաշուք գասական լեզուն, գրաֆարը արճատում էր լատինարան զպրոցի ներկայացուցիչների կողմից, ժողովրդական գրական լեզուն՝ միջին հայերէնը կորցրել էր ազդեցութեան նախկին ուրբանները, նոր գրական աշխարհաբարը, գրական բարբառները՝ արեւտահայ եւ արեւելահայ ճիւղերով եւ ենթաճիւղերով՝ դեռևս դառնուում էին զարգացման սարմանային վիճակում։ Այս բոլորի հետ

միասին թրքակասութիւնը (առևլժանական բռնապետական քաղաքականութեան հետեւանքով) հայութեան լայն շրջաններում վտանգաւոր չափերի էր հասնում: Բարդ, երկիւղալի այս իրադրութիւնը կարող էր կասեցնել հայոց նոր եւ ընդհանուր վերանորոգութեան չարժումը, որ սկսուել էր գեռեւա ժի. դարի երկրորդ կենցից: Ուստի, հայ հասարակական-քաղաքական մտքի, դրական-վրթական՝ եկեղեցական եւ աշխարհիկ դասերի բոլոր առաջարէմ ներկայացուցիչներին՝ մայր հայրենիքուած թէ զաղթավայրերում, մտահոգում էր ծաւալելու նպատակակուռ պարզար՝ պաշտպանելու հին հայերէնը բատինաբան աղճատումներից, վերականգնելուու նրա դասական աւանդները, դիւրացնելու նրա ուսուցումը, ասպարէղ բացելու ժողովրդական նոր դրական հայերէնի, աշխարհիկ լեզուի, բարբառային դրական հայերէնի զարգացման համար, եւ միաժամանակ թրքախօս հայութեան մէջ ազգային ողին վերաբնացնելու, մաշտոցեան դրերը ճանայման ներկայացնելու նպատակով՝ զարգացնելու նաեւ հայատառ թուրքերէն գրականութիւնը: Սրանք էին ժի. դարի հայոց գլուխան լեզուի զարգացման հետաւոր ուղիները եւ այս խնդիրներն էին ծառացած հայոց կրթական-լուսաւորական շարժման նուիրեալների առաջ:

Ժի. դարի հայոց դրական լեզուի ծրագրային այս առանձնայատուկ շարժմանը աստար եղան՝ Մխիթար Սեբատացին եւ Մխիթարեանները՝ Վենետիկում, Յովհաննէս Բաղէշեցին, Յակոբ Նալեանը, Պաղտասար Դմիտրը՝ Պորտում, եւ այլք՝ այլուր: Զի կարելի չնկատել այն ներքին միասնութիւնն ու փոխ-ըմբռնումը, որ գոյութիւն ունէր տարբեր վայրերում, տարբեր հանգամանքներում, դաւանաբանական հակադիր թեւերի պատկանող այլ լուսաւորականների միջեւ: Եւ զահամանալի է. ինչպէս նկատում է Լէօն՝ մի մայր չի ծնել նրանց, բայց ծնել է մի մայր ժողովուրդ...: Նրանք ծառայում էին հայոց աղքային կեանքի վերաշնութեան նոյն գաղափարին, նոյն ուխտին. «Աստուած հաստատ պահեսցէ զաթոռն հայր արքային, զի դրեամք լցոյց զադէն մեր եւ փոքր լուսաւորիչ եղեւ աղքին մերոյ»¹ – այսպէս է գնահատում Պոլսի նշանաւոր Պատրիարք՝ Յովհաննէս Բաղէշեցին Մխիթար Սեբատացու հրատարակչական առաքելութիւնը: «Այս մեծ ծագեաց այսօր եկեղեցւոյն Հայոց, զանձ տուաւ յԱստուծոյ գիրքս այս»² – յայսնում է նա եկեղեցու քեմից, քարոզի ժամին, Մ. Սեբատացու «Մեկնութիւն Մատթէոսի» գիտաքննական հրատարակութեան առթիւ: Յիշաւի, անդնահատելի են Մ. Ա-

1. Հ. ԱԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ, Մխիթար Արքահօր հրատարակչական առաքելութիւնը, Վենետիկ, 1980, էջ 92:

2. Անդ, էջ 92:

բաստացու հայերենագիտութեան նուիրաբերած ծառայութիւնները։ Մաքառումներով լի իր խմացական կեանքի ընթացքում, նա առաջինը (դիւանագիտական խորին զգուշաւորութեամբ) տեսական ու զործնական համատեղ պայքարի ուղիներ նշեց՝ հայոց գրական հին եւ նոր լեզուների զարգացման համար։ Յայտնի է, որ Մ. Սեբաստացին, անձամբ իր ջանքերով, հրատարակում է յիսուն անուն գիրք, որոնցից տասնչորսը իր հեղինակութեամբ։ Այդ գրքերը, դրանց հետ միասին նաև իր հեղինակած մի շարք ճեռագիր աշխատութիւններ, գիտական, բնագիտական, բարոյակիրատական, վելիկառիկայական, աստուածաբանական բաղմաթիւ հարցեր լուսաբանելու հետ միասին, զդալի մասով օգտագործուած էին իբրև ընթերցանութեան ձեռնարկներ եւ դասադրքեր՝ լեզուի ուսուցումը նոր հիմքերի վրայ գնելու համար։ Քերականութիւնն զրաքանի լեզուի հայկագիր սեռի, ձարտասանութիւն, Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց, Զվարդապետութենի մասմեց բանի եւ զարայարութենի նոցին, Գիրք քրիստոնեականի վարդապետութեան ընդ որում դմբ Այրենաւարն, Կրթութիւն ազօրից ընդ որում եւ շարակցի ոտանաւոր այրենաւարն, Յաղագս մաքնեմատիկայի, Յաղագս երաժշտութեան, Փիլիսոփայութիւն բարոյական եւ բաղամական հետ այլք։ Այս բոլորի հետ միասին նշնի է լեզուաբանութեան բնագաւառում Միսիթար Սեբաստացու նորաբարական դերը, ինչպէս գնահաւուում է ակադեմիկոս Գ. Զահուկեանը։ Հայկագետան բառարանի յայտնագործութիւնը Մ. Սեբաստացինը անվերապահօրէն դարձնում է հայոց գրական լեզուի առաջատար անձնութեան խոր վերանորոգիչը ծի. Ֆարում։ Եիրաւի, Հայկագետան բառաջին խոր վերանորոգիչը ծի. Ֆարում։ Հայկագետան բառաջին ամբողջութեամբ, ներառեալ Բառօքիք ի գրաքանէ յաշխարհաբառն, ուր մեկնին բառէ հայկագետան լեզուի սուսկ աշխարհաբառ, կամ տանկական բառիւ առանձին հատորը, հայոց ազգային լեզուի, դասական բառարանագիտութեան նոր պատմութիւնը հիմնաւորող առաջին քայլն էր հայ իրականութեան մէջ. պատմական մի երեսոյթ, որ խորհրդանշում էր՝ դասական լեզուի անաղարտութեան համար լատինաբանութեան դէմ մղուող պայքարը (որ բաղձալի վախճանի հասցրեց Մ. Զահշեանը)։ Վճռականօրէն բարձրացնոամ էր գրական նոր հայերէնի՝ աշխարհաբարի զարգացման խնդիրը եւ միաժամանակ նպաստուած թրքախօս հայութեան հայերէնի ուսուցման դործին։ Հասկանալի է, որ ծի. Դարում գրաբարի եւ աշխարհաբարի միջեւ լուրջ պայքար չկար եւ չէր կարող լինել։ Նման պայքար կը խորտակէր վերանորոգութեան շարժման բոլոր ծրագիրները, թէեւ ցաւով նկատուած է Մ. Սեբաստացին, «Բաղումք իցեն յազդի մերում աղքատք յիմաստից եւ բազմապարձանք գիտութեանց»։ այն մարդիկ, որոնք չհասկանալով գմեծագունեղ օգտակարութիւնը աշխարհաբարի, այդ ուղղութեամբ կատարուող ամէն մի քայլ գիտում էին իբրեւ

պայքար լընդդէմ գրաբարի : Մանուկ սերնդի կրթութեան եւ առ հասարակ գրագիտութեան նախնական քայլը պէտք է սկսուի աշխարհաբարով, նոր գրական հայերէնի քերականութեան ուսուցմամբ : Այս էր ժամանակի խոշոր լեզուաշխարարների հիմնարկան պահանջը . «Ձեզ համար գրաբար քերականութիւն չգրեցի, քանզի ձեզի աշխարհաբար հայերէն պէտք է» – վճռաբար դիմում է Մ. Սեբաստացին հայ մանուկներին, յուսալով, որ իր ձայնը կը հասնի նաեւ «աղքատք յիմաստից եւ բազմապարծանք» մարդկանց³: Սա գրական նոր հայերէնի պաշտպանութեան երկրորդ եւ աւելի վճռական քայլն է Յովհաննէս Հոլովից եւ Սկրոտերից յետոյ, նոր գրական հայերէնի անհրաժեշտութեան հրապարակային արդը՝ Ժ. Վարում. «Քանզի վասն անտէրունչ գոլոյն ազգին մերոյ ո՛չ է այնքան ի գործ ածեցեալ աշխարհաբար լեզուն մեր ի գրուածն եւ այսու ելեալ էր որպէս զանսովոր իր ինչ»⁴ – բոլորում է մեծ լրաւորիչը, այս անզամ բացայալուվ նոր գրական աշխարհաբարի զարդացումը արգելակող իրաւաքաղաքական հանգամանքը եւս...: Դասական հայերէնը իր բարձրութեան վրայ պահելու, նոր գրական հայերէնի ուսուցումը սկզբնաւորելու, հայատառ թուրքերէն գրականութիւնը զարդացնելու նոյն հարցերն էին ծառացած պոլսահայ նշանաւոր գործիների՝ Յովհաննէս Բաղիշեցու, Յակոր Նալեանի, Պաղտասար Դարի եւ այլոց առջեւեւ: Յայտնի է, որ Ցովէ. Բաղիշեցու եւ Յակոր Նալեանի դեկավարութեամբ, Ղուկաս Խարբերդցու, Յակոր Ճենճէյեանի, Պաղտասար Դարի եւ այլոց գործնական մասնակցութեամբ, Ժ. Վարուի 20–50ական թուականների ընթացքում, Պոլսում տպագրուում են աւելի քան ութսուն անուն կարեւոր դրբեր: Յովհաննէս Բաղիշեցու դպրոցը – նկատում է Լէօն – «Հարուստ էր մատքի զարդացողութեամբ եւ իր ձեռքին ունէր այնքան կանոնաւորուած ու մշակուած մի գրաբար լեզու, որ համեմատել անզամ չէր կարելի նախընթաց ժամանակների աղքատ ու աղճատուած լեզուի հետ: Կարելի էր ասել, թէ Բաղէշի դպրոցը հայոց դասական լեզուի մերածնունդն էր ակսում կ. Պոլսում⁵: Յակոր Նալեանը, որ ամէնից արդինաւոր գիտնականն էր Ցովէ. Բաղիշեցու աշակերտների մէջ, անձնուիրաբար կենսագործում էր իր ուսուցչի աւանդները եւ իր իսկ բազմահատոր՝ գրաբար, աշխարհաբար եւ հայատառ թուրքերէն երկերով հարատացնում էր ժամանակի հայ մատենագրութիւնը: Ի դէպ, նկատենք նաեւ,

3. Մ. Սեբաստացու աշխարհաբար քերականութեան քննական բնագիրը, համապատասխան ուսումնամասիրութեամբ եւ առանձին հատորով, հրատարակութեան է պատրաստում հայագէտ Հ. Ն. Տէր-Երսէսեանը:
4. Մ. ՍեբԱՍՏԻՉԻ, Գիրք քրիստոնէականի վարդապետութեամ շարադրեցեալ աշխարհաբար լեզուաւ, Գ. Ապ., Վենեսուլի, 1771, էջ 4:
5. Լէօն, Հայոց Պատմութիւն, Հռ. Գ., Երեւան, 1946, էջ 950:

որ կրօնական-ապդային կրթութեան եւ լուսաւորութեան այս առաջադէմ գործիչները միատեսակ հայեացք ունեին նաեւ հայտառ թուրքերէն գրականութեան զարգացման հարցի վերաբերեալ։ Այստեղ էլ առաջնութիւնը պատկանում է Մ. Սեբաստացուն։ Նրանք հայտառ թուրքերէնին էին դիմում «ստիպեալ», անհրաժեշտութիւնից մոռած, իբրև չարեաց փոքրագոյնի, իբրև թուրքացած հայութեանը իսպան չկորցնելու մի վերջին, յուսադրող քայլի։ «Բայց մինչ նոքին, որոց պիտոյ էր կիրառումն սորին առ ի ուսանիլ հայկական լեզու, - գրում է Մ. Սեբաստացին - , դիտէին միայն լեզու-տաճկական, ստիպեցայ, - շարունակում է մեծ հայկաբանը - , զի զիրատոն այսորիկ առաջնոյ գրգիկան, այսինքն դրան քիրականութեան (աշխարհաբար - Շ. Ն.) դարձուցանիցեմ ի լեզու տաճկական եւ հանդէպ անուանց հոլովեցելոց եւ բայց լծորդեցելոց զնիցեմ զբառա տաճկականս, որպիս եւ տեսանի»⁶։ Հայատառ թուրքերէն գրելու ցաւարի պատճառներին է անդրադառնում նաեւ Յ. Նալեանը՝ Զին եռգիւր գրում։ «Ահա եւ զբուն լեզու մեր իբր թէ կորուսաք վասն ձեր եւ յօտար լեզուս սկսաք խօսիլ։ Արդ մինչեւ յայտեղս՝ հատակոտոր եւ նման մեղուոց ի ծաղկանց ժողովեալ, աշխարհականաց ճաշակելի մեղք եւ խորիսի կազմեցաք գոեհկապական շարադրութեամբ։ Լաքին տակաւին ամէնից քիֆայէթ չանելով, չունքի բաղումք են յարգիս մերում գհայոց լեզուն իւրեանց չի գիտոցողք, որք միշտ յարդիւրն ծարաւի ընթանան եւ ծարաւ դառնան, ցողք, որք միշտ տարդիւրն ծարաւի ընթանան մեղուոց ի ծաղկանց ժողովեալ, աշխարհականաց ճաշակելի կամեցաք որ յայսմ իքիննմ մասին՝ միւմքիւնի մէրվան այնորիկ կամեցաք լեզու կազմեցաք գոեհկապական թէպէ խապաճա թիւրքնէ լեզուաւ՝ պաշխա-պաշխա կարգաւ պէճիտ չորտի խօսիմք ծաղկաբաղ տախտինվ»⁷։ ԺԼ. դարում վերանորուող գրական լեզուի տարաստիճան զարգացման այս ընթացքի մէջ նշանակալից դեր է կատարում Պաղտասաար Դպիրը։ Ելնելով ժամանակի լուսաւորական շարժման կենսական պահանջներից, ինչպէս Մ. Սեբաստացին, Յ. Նալեանը եւ ուրիշները, Պ. Դպիրը եւս ընտրում է դասական հայերէնը գրաբարը, ինչպէս նաեւ նոր գրական հայերէնը՝ աշխարհաբարը եւ հայտառ թուրքերէն գրականութիւնը դարդացնելու ուղիները միաժամանակ։ Յայտնի է, որ Պաղտասաար զարդացնելու ուղիները միաժամանակ։

6. Մ. ՍԵԲԱՍՏԱՑԻ, Դուռմ ներականութեան աշխարհաբառ լեզուին հայոց, Վենետիկ, 1727, էջ 3։

7. 8. ՆԱԼԵԱՆ, Դիրք իշխեցալ Զին եռգիւր, Կ. Պուլս, 1757, էջ 188։ Լէօն հայտառ թուրքերէն գրականութեան սկզբնաւորող է ճանաչում Յ. Նալեանին։ Ենտառապատկանութեանին հետեւում է - գրում է նա Յ. Նալեանի Զին եռգիւրի մասին - մի ամբողջ 300 երեսից աւելի հայտառ թուրքերէն աշխատութիւն՝ դրուած հայերէն տառերով։ Այստեղից է սկսում թուրքայաց գրականութիւնն այս տարօրինակ երեւոյթը, հայտառ թուրքաբարբառ մի հայկական գրաւ կանութիւնն (Ալօ, Յշ. Խու., էջ 952)։ Մակայն, Նալեանից առաջ լեզուով բազմաթիւ, բազմաբանոյթ երկիր են մեզ հասել։

Դպիրը Սեբաստացուց վեց տարի յետոյ (1736 թուականին) տպագրում է Պարզաբանութիւն քերականութեան կարնաուտ եւ դիւրիմաց, դրաբարի երկհատորանոց քերականութիւնը, որով հռչակաւոր գիտնականը փատորէն արձագանգում է դրաբարը դիւրըմբունելի դարձնելու Մ. Սեբաստացու գաղափարին: Պաղտասար Դպիրը Սեբաստացու օրինակով առաջադրում է նաև աշխարհաբար դրական լեզուի քերականութեան դասագրքի անհաժեցութեան հարցը. «Եւ չիւնքի այսպիս պիտանի բան է քերականութիւնն, ասկէց առաջ ողորմութեամբն Սատուծոյ մեր տվար իսելքին կեօրէ քերականութիւնն մի շարադրեցինք բացկեկ շարադրութենով, որ փէք դօլայ կու հասկացուի. անձամին ինչ զատար բաց շարադրութիւն դինի նէ, կէնէ չիւնքի դրոց շարադրութիւնն է, փոքր տղայքն կամ այլք՝ որ տահար դրոց լեզուն չեն գիտեր՝ դիմարկեկ վու հասկանան: Անոր համար թէքքար զայս փոքրիկ քերականութիւնն ալ նոր շարադրեցինք աշխարհի բառով, որ դրոց բան հասկանալու սէր ունեցող փոքրիկ տիբացուներն, կամ թէ ով ոք եւ լիքէ, ասով մանեն ի մեծ քերականութիւնն եւ հեշտ ուսանին...»⁸: Իր աշխարհաբար քերականութեան դասագրքի «Հարցմունք պատասխանիք բան քերականութեան» բաժնում, Պաղտասար Դպիրը հարց ու պատասխանի խօսուն եղանակով վերակենդանացնում է աշխարհաբար քերականութեան դասը՝ ԺԼ. դարի հայոց գպրոցում. «Մեր լեզուին դիրն քանի՞ է, - Բնականն լու է. առաջինն այր, վերջինն քէ... Տեսակն քանի՞ է - երկու, նախատիւ, ածանցեալ, ինչպէս ծով, ծովային, հող, հողեղին եւ այն: Ածանցեալներուն վերջինն քանի՞ են - Շատ են: Սերտե՞ր ես զամէնն - Հրամէր ես: Բաէ տեսնեմ - Ային, եղին, եայ, ի, ցի: Ասոնցմէ ի զատ այլ կա՞յ թէ չէ - Հրամէր ես, տահար քանիք մալ (= մ'ալ - Շ. Ն.) կան ասոնցմէ ի զատ... Զանոնք ալ ըսէ տեսնեմ...»⁹: Մինչ այս, գեռեւս 1752 թուականին, Պաղտասար Դպիրը տպագրում է իր Բարեւագիրք՝ նամակների, դիմումների, պայմանագրերի եւ այլ նիւթերի մի հաւաքածու, որը դարձեալ շարադրուած է ժամանակի խօսակցական լեզուվ: Յայոնի է, որ Պաղտասար Դպիրը ունի նաև հայտառութերէն արձակ եւ չափածոյ բաղմաթիւ երկեր:

* * *

Ակադեմիկոս է. Աղայեանը նկատում է, որ անցեալում եղել է նաև «միջբարբառային խօսակցական լեզու», որը գլաւի գեր է կատարեկ նոր գրական հայերէնի զարդացման գործում: «ԺԼ-ԺԲ. դարե-

8. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Գիրք քերականութեան (աշխարհաբար), Պուհս, 1760, էջ 2:

9. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Անդ, էջ 163, 165-166:

րում - զբում է նա - աշխարհաբարը կար արդէն որպէս ժողովրդական խօսակցական լեզու եւ ծգտում էր գրականութեան լեզու զառնալու : Այդ շրջանը յարմար է կոչել վաղ աշխարհաբարի կամ մինչ-աղջային աշխարհաբարի շրջան»¹⁰ : Արդեօք սա նոյն «քաղաքացիական» կամ «քաղաքական» հայերէնը չէ¹¹, որի մասին խօսում են քերականագէտները : «Քաղաքական կամ ատենական հայերէնը - զբում է ակադեմիկոս Գ. Զահուկեանը մէջմբերելով» Հ. Վրթանչս Զալիսեանցի լաօսքերը - չէ ամենեւին կանոնաւոր (կանոնաւոր աւլիսներու նկատի ունի դրաբարը - Գ. Զ.) եւ ամենեւին անկանոն (նկատի ունի բարբառներ - Գ. Զ.), այլ խառն յերկոցունց՝ ի կանոնաւորէ եւ յանկանոնէ, եւ զայս ի գործ ածեն քաղաքական մարդիկ եւ սակաւ ինչ տեղեւակք գրոց : Նաեւ քերթողք ի յատենա-խօսութեան եւ ի զրուցարութեան զքաղաքականն ածեն ի գործ, զի գիւղաւ իմասցին լսողքն եւ զի այնպէս վայել է խօսակցութեան»¹² : Եւ կամ դա այն նոյն նոր գրական հայերէնը չէ¹³, որով մի շարք գըր-քեր է մեղ թողել Յ. Նալեանը : Լէօն իր «Հայոց պատմութեան» Գ. Հատորում ըստ արժանույն գնահատելով՝ Նալեան աղբիւրագէտի, պատմաբանի ծառայութիւնները, անդրագանալով նրա աշխարհաբարին, գրում է . «Այս աշխարհաբար լեզուն ունի այն ձեւերն ու կազմուածքը, որոնք յատուկ են արեւելեան աշխարհաբարին» : Եւ թւում է - շարունակում է զիտնականը - որ եթէ այս ձեւերով շարունակուէր աշխարհաբարը Կ. Պոլոսում եւ ատտիճանաբար զարգանար ու մակուէր, հաւատարիմ մնալով իր կիրառած ձեւերին ու բառակազմութեան, այսօր հայ ժողովուրդը կ'ունենար մի եւ ընդհանուր գրական բարբառ»¹⁴ : Եւ Մխիթար Սեբաստացին, Եւ Յակոբ Նալեանն ու Պատմասար Դպիրը Ժ. Պարի արեւմտահայ գործիչներ են . նքանց գրական աշխարհաբարը շատ հեռու չէր կարող լինել մի-մեանցից : Աւելին, նրանց զքական լեզուի ընդհանրութիւնները (տարբեայնութեան առկայութիւն, օտար բառերի օգտագործում, բարբառային, տեղական լեզուամտածողութեան տարրեր՝ մէկի մօտ շատ, միւսի մօտ քիչ), աւելի ակնառու են քան տարրերութիւնները : Ինչպէս նկատում են զիտնականներ՝ Գ. Զահուկեանը, ի. Աղայեանը, ինչպէս տեսանք վերեւում եւ ինչպէս գեռ կը տեսնենք ատորեւ, անհերքելի է այն ճշմարտութիւնը, որ Ժ. Պարում եղել է մի ընդհանուր մէջմբարբառային խօսակցական լեզու՝ արեւելահայ եւ ահանուր մէջմբարբառային գերարշուող տարրերով, եւ որ թէ՛ Սերեւմտահայ բարբառային

10. Ե. Բ. ԱՂԱՅԵԱՆ, Հայ լեզուաբնուրեան պատմութիւն, Հ. Բ., Երևան, 1962, էջ 344:

11. Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գրաբարի ֆերականութեան պատմութիւն, Երևան, 1974, էջ 258:

12. Լէօն, Աշ., էջ 951-952:

բաստացին, թէ՛ Նալեանը, եւ թէ Պաղտասար Դպիրը, նոյնիսկ Ն. Յովնաթանը, Ստ. Դաշտեցին եւ այլք, այդ ընդհանուր հիմքի վրայ են հիւսել իրենց աշխարհաբար գրական երկերը։ Այդ նոր գրական հայերէնն է, որ եւ յետազայտամ «երկիվելուել է», ինչպէս նկատում է նաև Ռ. Խմանեանը, եւ առաջացել են արեւելահայ եւ արեւմտահայ գրական լեզուները……

ԺԼ. դարի գրական լեզուի խնդիրը մեղ հետաքրքրում է իրեւ պատմական երեւոյթ, իրեւ ԺԼ. դարի գեղարուեստական գրականութեանը առընչուող էական հարց։ Այս հարցի մասնավիճական քննութիւնը հեռու է մեր նախատակներից եւ կարողութիւններից։ Չենք կարող չնկատել, ասկայն, որ ԺԼ. դարի գրական լեզուի պատմութեանը նույիրուած մեղ ծանօթ աշխատութիւններում գեղարուեստական գրականութեան ընձեռուած հարցուստ նիւթը անհրաժեշտ չափով նկատի չի առնուած։ Մեր խնդիրն է ցայց տալ ԺԼ. դարի գրական լեզուի տարաստիման, բազմաշերտ զարգացման ընդհանուր պատկերը, որը եւ իր որոշակի արտայայտութիւնն է գտնել նաև գեղարուեստական գրականութեան մէջ։ Գրական լեզուի ժողովրդականացման, ազգայնացման այն գիծը, որ սեսականօրէն եւ գործնականօրէն պաշտպանում էին դարի հշանաւոր լեզուաշխարաբները՝ Մ. Սերաստացին, Պ. Դավիրը եւ այլք, արտայայտում է նաև գրաֆան ըստեղծագործութիւններում։ Մի նպատակային շարժում է ստեղծուում նաև այս խնդրուած։ Գեղարուեստական գրականութիւնը հարստանում է եւ գեղեցիկ գրաբարաբեզու ստեղծագործութիւններով, եւ նոր գրական հայերէնով՝ աշխարհաբարով, եւ հայատառ թուրքերէն բազմազան երկերով։ Գրական լեզուի այս տարաստիման զարգացմանը առաւել մեծ չափով ենթարկում է բանաստեղծութիւնը, չափածոյ խօսքը, եւ դա հասկանալի է գրական սեռերի մէջ բանաստեղծութիւնն է լայնօրէն տարածուող, առաւել դիւրին եւ ազգու գեղագիտական ճանաչողական այն միջոցը, որով ընթերցողը անմիջական կապի մէջ է մտնում իրականութեան հետ։ ԺԼ. դարի վերանորոգութեան կամ անցման շրջանի հայքանաստեղծ ճպտում է, որքան ընարաւոր է, նոր շունչ հաղորդել աղաքային լեզուին, վերակենդանացնել հայոց հին եւ միջին գարերի քանաստեղծութեան լեզուի ու արուեստի կենսական գծերը եւ դրան զուգահեռ, անհետացած միջին հայերէնի փոխարէն, գրական կեանք տալ նաև ժողովրդական խօսակցական լեզուին։ Բարդ ու գժուարին էր ԺԼ. դարի բանաստեղծի գերը այս առումով։ Նա իր ողբի եւ մթափման երգերով մերթ խօսում է իր ժողովրդի հետ նրան հասկանալի գրաբարով՝ «ապար բանիւ, զիւրալուր ոճիւ», մերթ՝ դրոց ոսկեղինիկ լեզուով, մերթ՝ գրական նոր աշխարհաբարով, բարբառախառն գրական հայերէնով, մերթ էլ՝ հայատառ թուրքերէնով։ Գրական լեզուի հաղորդակցման

այս տարատիճան միջոցներով նա բացում է իր ժողովրդի առաջ մեսրոպատառ մատեանների ոսկեկուռ էջերը, ուսուցանում նրան՝ հայոց այրութենից ակաած մինչեւ Ասրենացու Պատմութիւնը, Աստուածաշնչի բարոյական խրատանքից սկսած մինչեւ Դաւիթ Անյաղթի ճշմարիս փիլիսոփայութեան հրմունքները, Վարդանանց քաջերի հերոամսրուերից սկսած մինչեւ Դաւիթ Բէկի ազատագրական պայքարի պատմութիւնը, մասնացոյց անում իր ժողովրդի հին ու նոր սաւերը, այդ ցաւերից ազատագրուելու ուղին, լուսաւորութեան ուղին, պայքարի ուղին:

Արդ, տեսնենք թէ ո՞րն է Ժ. Դարի գեղարուեստական դրականութեան լեզուի ընդհանուր իրապատկերը . . . : Վ. Լ. Աճեմեանը Գրական արեւելահայերէնի ձեւաւորումը իր օգտաշատ դրբում նկատում չ թէ «XVIII դարում գրաբարի գիրքերը պղալիօրէն ամրապղնդում են», որ «Արեւետահայ աշխարհաբարը XVIII դարում միայն երկրորդական գրաւոր լեզու է . առաջնութիւնը այդ տեսակչուց պատկանում է գրաբարին»¹³: Մ. Խշինանեանը, նոր գրական հայերէնը XVII-XVIII դ.դ. աշխատութեանը մէջ, անգրադառնալով Ժ. Դարի գրական հայերէնի երկիրկման հարցին, նոյն գաղափարն է յայսնում: «Նոր գրական լեզուն շարունակում է մնալ իրբեւ գերազանցապէս կրօնական, թուաբանական, մի խօսքով՝ իրբեւ ոչ գեղարուեստական երկերի լեզու, խակ իրբեւ գեղարուեստական դրականութեան (գրաւոր ատեղծուող), գլխաւորապէս չափածոյի լեզու շարունակում է իշխել գրաբարը, մասամբ էլ միջին հայերէնի որոշ տարրերակներ, որոնք երբեմն բաւական մօտենում են նոր գրական հայերէնին (արեւետեան ճխաղին)»¹⁴: Յիշաւի, Ժ. Դարում իշխող լեզուն գրաբարն է եւ գեղարուեստական երկն էլ ատեղծուում է հիմնականում գրաբարով: Հրաժարուել գրաբարից, այդ նշանակում էր հրաժարուել անցեալից եւ փակել գալիքի ճանապարհը: Բայց ասել, թէ իշխողը գրաբարն է եւ չշարունակել այս հարցի քննութիւնը՝ չի կարելի: Նկատեցինք, որ Ժ. Դարի գրչի շարժման, գրական ատեղծագործական մարդը գործէնչերին մէծապէս մտահոգում էր գրական հայերէնը հաղորդակցութեան լայն միջոց գարճնելու խնդիրն՝ առ հասարակ: Այս նկատառումով նրանք ձգտում էին, որքան որ հնարաւոր էր, հին հայերէնը՝ գրաբարը իր դասական բարձունքի վրայ պահելու հետ միասին, մատչելի, գիւրալուր դարձնելու այն, պարզեցնելու նրա շարայարութիւնը այն աստիճան՝ որ ամէն մի գրա-

13. Վ. Աճեմեան, Գրական արեւետահայերէնի ձեւաւորումը, Երեւան, 1971, էջ 22, 23-24:

14. Մ. Խշինանեան, նոր գրական հայերէնը XVII-XVIII դ.դ., Երեւան, 1979, էջ 112:

15. ՄԵՐԱՍՏԱՑԻ, ՔԵՐԱԿԱՑՈՒԹԻՄ գրադափ լեզուի հայկակեան սեռ, ՎԵՆԵ-
ՐԵԼ 1730 թ. 3:

16 ԱՐԵՎԱՏՅԱՑԻ Գիրք բրհստոնեականի վարդապետութեան, էջ 3-4:

ի մէջ զիտանոց ունի զալտուղ իւր……»¹⁸: ԺԼ. դարում, ահա, գրաբարի ղործածութիւնը, ամէնուրեք եւ գեղարուեստական գրականութեան մէջ, ընթանում է այս ճանապարհով: Իրեւ «գլխաւորապէս չափածոյի լեզու, շարունակում է իշխել գրաբարը», բայց պարզ գըրաբարը, այն գրաբարը, որ «առաւել զիւրահասկանալի է ամենեցունց»: ԺԼ. դարի առաջաւոր բանաստեղծութիւնն, ահա, զիրացանցապէս ստեղծում է պարզ գրաբարով՝ «պարզ բանիւ», «ղիւրին ոճիւ»: Գրաբարը պարզեցնելու խնդիրը ժԼ. դարի գեղարուեստական մարդի գործիչների համար դառնում է ստեղծագործական միտում (գրական միտում): Պարզ գրաբարով են գրում իրենց ստեղծագործութիւնները զարի նշանաւոր եւ ոչ նշանաւոր բուլոր բանաստեղծ-գործիչները՝ Միխիթար Սեբաստացի, Պաղտասար Դակիր, Յակոբ Նաւեան, Գրիգոր Շերպանցի, Սիմէոն Երեւանցի, Պետրոս Նախիջևանցի, Պետրոս Ղավանցի, Գրիգոր Օշականցի, Ցովհաննէս Կարնեցի, Յարութիւն Կարնեցի, Մովլէս էլղորումեցի և այլք: Գրեթէ նոյն հեղինակները գլամի չափով գրում են նաեւ մըջին պարզութեամբ՝ «ոչ այնքան զիւրահասկանալի ամենից», ինչպէս նաեւ՝ խրթին գրաբարով՝ «ոչ հասկանալի ամենից», «այլ միայն՝ գիտնոց...»: Այս բոլորին զուգահեռ՝ նոյն հեղինակներից շատերը գրում էին նաեւ աշխարհաբարով, ամէնքին հասկանալի գրական նոր հայերէնով եւ հայտառակ թուրքերէնով: Բնը ենք մի շաբք օրինակներ ԺԼ. դարի գրական տարաստիճան, տարատեսակ լեզուով ստեղծուած բանաստեղծութիւններից.

«Ննջեա՛ որդեակ քաղցր եւ անոյշ,
Հանդիր քնով եւ առ քեզ ոյժ.
Օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր,
Աստուածորդոյոյ իմ օրօր:

Մի՛ բարձրագոչ ձայնիւ երգեր,
Այլ քաղցր երգեա՛ եւ հանդարտ լեր,
Օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր,
Երգեա՛ դու օրօր:

Մինչ ի ննջեւ մի՛ համբուրեր,
Մի՛ ի քնոյ զարթուցաներ,
Օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր,
Երգեա՛ դու օրօր:

18. Մ. Սեբաստակի, Քերականուրիւմ գրաբարի լեզուի, էջ 452:

2.- ԲԱԶՄԱՎԵՊ 1985



950 ~ 86

Յորժամ զարթնու, յայնժամ սիրեա՛,
Չոտս եւ լըճեռա իւր համբուրեա՛,
Օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր,
Երդեա՛ դու օրօր»¹⁹:

* * *

«Մատի՛ր մանկիկ տիով փոքրիկ,
Խնդրեա՛ սիրով դու զայս գրովիկ,
Ի միտ առ զբանա, որք են յայսմիկ,
Թշուատ լեզուաւդ, որ է քաղցրիկ»²⁰:

Այսպէս պարզ ու դիւթիչ, քաղցր ու չոյող գրագարով են հիւսուած Սեբաստացու օրօրօցային, մանկական, կրթական բանաստեղծութիւնները, ինչպէս եւ նրա մաքառողական կեանքի տառապանքները վերարթնացնող քնարական կտորները:

«Քանզի եղեաք դերի մեք յօտար աղբաց,
Կոխան եւ անպիտան մէջ համայն աղբաց,
Գունիմք դէտ եւ տեսուչ եւ կոմ հոգարարձ.
Վասըն այն ողբամ եւ յորդ արտասուեմ:

Զարթի՛ր, Երեմիա, եւ ողբայ յօրինէ,
Արտասուօք ողբա՛ եւ զմեզ աւաղէ,
Զի կորովի ազգն մեր ողբոց արժան է.
Վասըն այն ողբամ եւ յորդ արտասուեմ:

Ա՛ռ ընդ քեզ ողբակից զմեր Խորենացին,
Լե՛ր լարսակից նմա ողբօք դառնաղին,
Աւա՛զ, ափսոս կարդա՛ մեր հայոց ազգին.
Վասըն այն ողբամ եւ յորդ արտասուեմ»²¹:

Այսքան սրարդ եւ յատակ գրաբարով է իր խորունկ ցաւը ողբում առնեանական դատարանի վճռոով վլիստառած բանաստեղծ-մատենագէտ կոմիտաս Քեռմուրեճեանը՝ 1706 թուականին՝ նահատակութիւնից մէկ տարի առաջ:

19. Մահմետական Սեբաստացի, Տաղարան, Վենետիկ, 1727, էջ 18:

20. Մահմետական Սեբաստացի, Գիրք քրիստոնէականի վարդապետութեան, էջ 302:

21. Մատենադարան, Երեւան, Զեռ, թիւ 9597, թերթ 92ա:

«Մարտին ի քէն ազգն Տաճկաց,
Զի յաղթեցեր նոցին զօրաց.
Զարքայական զէնն Քրիստոս,
Տէր Աւետիս, քեզ պարզեւեաց :

• • • • • • • • •

Հասեր արագ բերդն Մեղրին,
Սատակեցեր ըղթարածին.
Երեսն հազար թուղթ Խարածին,
Այրեցեր ի մէջ կրակին :

Ազնիւ գօրօք քաջ եւ ընտիր,
Աղուկեաց դաշտն ճեպէիր.
Անարդողաց սրբոյ Խաչին,
Տէր Աւետիս վրչժինելի»²²:

Այսքան պարզ, դիւրամատչելի գրաքարով է դրում բանաստեղծ Սահակ Երեցը իր պատասխական երգը՝ կրկին մարտի դաշտ կոչելով Դաւիթ Բէկի զինակից տէր Աւետիսին :

«Պարիսպ չունի իմ քաղաքին,
Պաշարեաց զիս չար թշնամին,
Զքաղաքս աւար առնուլ կամին,
Հա՛ս յօդնութիւն Կոյս տիրածին :

Իսկ ես թափուրս ամենեւին,
Ոչ ունիմ զէն պատերազմին,
Թիկունք տո՛ւր ինձ, Աստուածածին,
Զի մի՛ քաղաքն իմ խլեսցին»²³:

Այսպիսի պարզ գրաքարով է ողբում իր ցաւը բանաստեղծ Պօղոս Վանեցին՝ հայրենի Վաղարշակերտ քաղաքը ներխուժած թշնամուն դիմադրելու համար զէնք չունենալու պատճառով :

«Մեծ թագաւորդ Արշակունեաց,
Պետ եւ իշխան Հայոց մեծաց,
Յաղթօղ արիդ ի մէջ քաջաց,

22. Դասիք Բէկ կամ Պատմութիւն Ղափանցւոց, աշխատասիրեց Հ. ՍԱՄՈՒԷԼ, ՎԱՐԱՄԵԱՆ, Վենետիկ, 1978, էջ 144-145:
23. Հ. ՂԵՒՈՆԻ ԱԼԻՇԱՆ, Հայպատում, Վենետիկ, 1901, էջ 510:

Ո'կ սուրբ Տրդատ, արքայդ Հլզօր,
Օդնեա' մեղ այսօր»²⁴:

Նոյն պարզ դրաբարով է բանաստեղծ և մատենագիր Ղազար Ջահնիկին, անցեալիք քաջերին յիշելով, ոյժ և զօրութիւն ազերսում ըրկնային թագաւորիկ՝ պարակաթքական բռնակալներից Հայաստանի պատարագելու համար:

«Պարզ բանիւ» երդերի մի ցայտուն նմոցը է Յ. Նալեանի խթանական սեստրակի մեծածաւալ պողմբ.

«Տարիի եօթնեակ՝ յարմար ուսման,
է եղանակ իբրու դարնան,
Անտի ըսկիլորն արա վարժման,
Զի իցես գուշ հասուն յաշնան:

Յորժամ երթաս ի գլրաստան ,
Կարծիր զընալ ի բուրպատան ,
Կուտել զծաղիկ դռ զանազան ,
Առնել պրասկ քոյր գաղաթթան :

Եւր Աղեքասանդը Փիլիփեան,
Որ մէշ ի խորս Ոլովմպական,
Զինչ թագ առնէր նա յալթական՝
Ընծարէր հօրն առիթ ցնծման»²⁵:

Սա արդէն պարզ զբարարի այնպիսի մի ներդաշնակութիւն է, որ գժուար է որոշել աշխարհարարի հետ ունեցած յարաբերութիւնն աստիճանը։ Արդեօք նոր զրախան հայերէնի՝ աշխարհարարի, նրա արեւելեան եւ արեւետեան ճիւղերի կազմաւորման հարցում, «պարզ բանիւ» զբարարային կազմութեամբ այս երգերը չե՞ն օգնել եւ կամ թէ պարզ, դիւրամատչելի, ամէնքին հասկանալի զբարարը հալորդ գալցութեան լայն միջոց գարձնելու այս ընդհանուր ձևուումը, որ, ինչպէս նկատեցինք, ակնբախ էր ԺԷ. դարում, վճռական գեր չէ՞ կատարել։ Նկատելի է նաև, որ հէնց այս «պարզ բանիւ», «դիւրամատչել» ոճիւ զբարարի մէջ հետզհետէ մուտք են գրծում ժողովրդական լեզուամտածողութիւն ճեւեր ու եղանակներ, ժողովրդի բառ ու բանը։ Բէրենք մի շաբք օրինակներ այս միտքը ե՛ւ հաստատելու համար։

24. ՂԱԶԱՄ ԶՈՀԿԵՑԻ, Դիրք նորարոյս, որ կոչի Նրգարամ, կ. Պուլիս, 1737, էջ 196:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՈՒՅԹ ԽԵԲՐԻՆ ԽՈՎԳԻՒՄ ՀՈՆԵՐՉԱՆ, Պուլիս, 1746, էջ 43:

25. ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ, ԳՐՔՈՒՂԻՍ ԿՈՉԵԳԻՒԱԼ ՀՈԳԻՉԱԽ, ՊԱՀԱ, 1746, Էջ 43:

«Զիլ-զիլ ձայներով, համեղ տաղերով,
Գինին սառուցէք փայլուն պաղերով,
Վարդըն փընջեցէք քօփ-քօփ շաղերով,
Պուտ-պուտ ցողերով.

Գեղգեղեալ գոչէ,
Կանչէ, հառաչէ
Պիւլպիւն՝
Երամով իւրով»²⁶:

«Առաւոտեան քաղցր եւ անոյշ հովերըն,
Մ'երձեալ հընչեն մեղմով քրիփոց ֆովերըն,
Արդ, ծածանին աչաց լցեալ ծովերըն.

Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ անըմման,
Գեղըդ նըմման արեղական վառվառման:

•
Գարունն էանց, ես ֆեզ կարօտ մընացի,
Այրիմ, տապիմ, որպէս ի հուր հընոցի,
Քեզ, շատ օրեր, ես ի ձեռաց դընացի»²⁷:

«Եթէ իցես ուշուտ,
Կա՛լ բիւրեղ տաշուտ,
Մի՛ կերիցես մաշուտ
Եւ լիցիս հաշուտ»²⁸:

Պետրոս Ղափանցու մօտ զրաբարի քերականութեան յստակ, պարզեցուած ձեւերի մէջ ծլում, բոլցրջում են նոր զրական հայերէնի տարրերը՝ «Թօփ-թօփ շաղերով», «զիլ-զիլ ձայներով», «քովերըն, հովերըն», «հովանամ», «զովանամ» կամ տուաել բարբառային՝ «ուշուտ», «տաշուտ», «մաշուտ», «հաշուտ», «կաշուտ», «քեզ շաքար նշուտ», «քեզ, շատ օրեր, ես ի ձեռաց դնացի» . . . : Անշուտ, Սիւնիքի, Ղափանի տեղական խօսակցական բարբառներից են ներթափանցել սրանք Պ. Ղափանցու բարձրարուեաս քնարերգութեան հարուստ բառացանկը: Գրաբարը, այդ զօրաւոր, դասական լեզուն, յղկում, հարթում է ժողովրդական լեզուամտածովութեան ամէն մի անբարեհնչութիւն եւ տալիս է նրան զրական մի իւրատեսակ պաճուճանք, նպաստում ստեղծելու զրաբարային կաղմութեամբ ժողովրդաշունչ, կենասթով, գեղեցիկ բանաստեղծութիւններ:

26. Պետրոս Ղափանցի, հրտ. Շ. ՆԱԶԱՐԵԱՆ, Երեւան, 1969, էջ 241:

27. Անդ, էջ 278, 281:

28. Անդ, էջ 315:

Սակայն, ինչպէս յայտնի է, ԺԼ. դարը գրաբարի վերականգնման, վերազարդացման բուռն շրջանն էր: Հայոց մտաւոր շարժման դործիչ-բանաստեղծները չէին կարող կանգ առնել գրաբարի գործածութեան այս աահմանագծում: Ուստի, նրանք, ինչպէս վերեւում նկատեցինք, դրում են նաեւ միջին բարդութեամբ, «ոչ այնքան դիւրականալի ամենից» գեղոն գրաբար բանաստեղծութիւններ: Վերոցիշեալ բանաստեղծութիւնները, նախորդների հետ միասին, հընարաւորութիւն են տալիս երգչին՝ անարդել մտնելու գրաբարի ծովածալ զանձարանը, դրսեւորելու հայոց հին դասական լեզուի դեղիկութիւնը, ճոխութիւնը, ճկունութիւնը, նրա կազմութեան՝ ձեւաբանութեան, հնդիւնաբանութեան, շարայարութեան, ներքին նըրութիւններն ու բարդութիւնները: ԺԼ. դարի, վերեւում յիշատակուած նոյն բանաստեղծներից են ահա՝ նաեւ այս կարգի երգերի հեղինակները: Նրանց այդ երգերը հարստացնում են ընթերցողի բառապաշարը, խորացնում գրաբարի իմացութիւնը, բարձրացնում նրա մաշտիլը, զարգացնում, սրում միտքը, երեւակայութիւնը: Միջին պարզութեամբ գրաբարային բանաստեղծութիւնները ունեն նոյնքան ընդուժուած խոհական, փիլիսոփայական, քնարական երանգ ու բընոյթ: Այդ երգերի առանցքն են կազմում իրերի, աշխարհի ճանաչողութեան խնդիրը, մարդու բարոյական մաքրութեան, բանականի եւ անբանի, հոգու եւ մարմնի, բարու եւ չարի, կեանքի եւ մահուան փիլիսոփայութեան, եղբայրութեան, միաբանութեան մշտահնչուն հարցերը, ինչպէս նաեւ հասարակական, տնտեսական, կրօնական-ադպային, քաղաքական միեանքի խնդիրները: Խնդիրներ, որոնք երբեք այնքան խորն ու լայն չափերով չեն արուայալութել, ինչպէս ԺԼ. դարում: ԺԼ. դարի նշանաւոր բանաստեղծները այս կարգի երգերում ձգտում են, որքան որ ներըում է իրենց ոյժն ու տաղանդը, վերականգնելու հին դասական բանաստեղծութեան մակարդակը, նմանուելու նարեկացուն, Շնորհարուն, Լամբրոնացուն: Գրական այս միտումը ԺԼ. դարի նշանաւոր բանաստեղծներ՝ Պ. Դարին, Պ. Ղափանցուն, Յ. Նալեանին, Պ. Նախիչևանցուն եւ այլոց հացնում են չօշափելի արդիւնքի: Այս բանաստեղծների ստեղծագործութիւնների մի զգալի մասը հիւսուած են միջին պարզութեամբ գրաբարով:

«Թէ ի մահ մատնեալս՝ ո՛վ կենդանի լոյս,
Փրկես, որ եւ ինձ ապաւէն եւ յոյս,
Թէ զողք հեծութեանս հասցես ի հոգւոյս,
Կամ զաշացը լաց՝ բերկութեան եւ բոյս:

Թէ ըզիորտակեալս կաղզուրեալ հաստես,
Հղղեղ կենաց գոլդ՝ այնու ճշմարտես,

Թէ ի կործանեալ հոգիս ակնածես,
Հոգելի՛ց եւ դու եւ ականատես»²⁹:

«Ո՛վ անարատ, պարզ հայելիք եւ վըճիտք,
Յամէն դիմաց առւրբ լուսափայլ մարդարիտք,
Յայց ելիք մեզ, ո՞վ աղաւնիք պարզամիտք,
Մարդկան ազդի դուք բարեկամք ճշմարիտք:

Անեղ արփւոյն դուք շառաւիղ յարածագ,
Խաւար մըտաց ծագէք ըզոյս փոյթ երագ,
Խորոց էին՝ դուք բանալիք վեհ, աւագ,
Մըտաց մերոց լուսահեղոյս առւրբ ճըրագ:

• • • • • • • • • • •

Մեք եմք սովինալ ճերումըդ առւրբ գիտութեան,
՚ի անկեալ ի գուրք գիւաց եղեալ եմք կոխան,
Որ մըուղնչեն թէ զո՞ւ ի մէնջ ի կուլ տան,
Մեղ օգնեցէ՛ք, տարոյի ըդյոյս ազատման»³⁰:

Այսպիսի գեղող գրաբարով, բարձր, հանդիսաւոր, ազդու չնչով
է Յ. Նալեանը փակում ֆնարեկի իր նշանաւոր մեկնութեան բազմա-
թիւ գլուխները. այն Նալեանը, որն իր Մեկնութիւն բարոյական փի-
լիստիայութեան Սիրաքայ վիթխարածաւալ գիրքը լցոնամ է նաեւ
կենցաղային, ուսուցողական, դիւրըմբանելի գրաբար բանաստեղծու-
թիւններով, իսկ Զեն հոգիւոր եւ Քրիստոնէական ուսանելի գրքերի
էջերը՝ նոր գրական հայերէն՝ աշխարհաբար եւ հայատառ թուրքե-
րէն բանաստեղծութիւններով....: Բարոյախօս բանաստեղծը բոլոր
դէպքերուած ասեղանին գնում է բուն վէրքի վրայ: Պարզ, ամէնին
դիւրըմբանելի գրաբարով, մեղ արդէն ծանօթ բանաստեղծութիւննե-
րի կողքին միշին պարզովթեան գրաբարալեզու երկերի ընտիր օրի-
նակներ են թողել զարի նշանաւոր բոլոր բանաստեղծները.

«Գուշակմունք պատժոց
Գործոցն իմ չարեաց
Գումարտակը լինին
Դատողիւ հանդէպ,
Դատապարտելոյս

29. ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ, ՄԵԿՆՈՒԹԻՄ ԱՊՈՐԻՑ ԵՎ ԱՄՐԲՈՂԻՄԱԳ ԱՐՔՈՅԻ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵ-
ԿԱԳՈՒՅ, Կ. Պուշկա, 1745, էջ 612:

30. Անդ, էջ 625-626:

Դաստալսաղ լինին .
Տէ՛ր ողորմեա'յ:

• • • • • • •

Ցնծութիւն բնաւից ,
Ցօղեա' զցող շընչոյդ
Ցաւոյս զովացումն .
Իիւծանիւթ բնութեանս
Իիւսեալ խառնեսցես
Իիւզոյդ քո պարզեւ .
Տէ՛ր ողորմեա'յ» ,

ցաւաղին մոնչում է Մովաչս Զուզայեցին՝ Ողոք աղերսից արտա-
սուաց խորագրով երկում՝ իր անձի , բանական գոյլի , մարդու եսի
մէջ տեսնելով բոլոր չարիքների բուն պատճառը :

«Բնական դիւցազանց աշխարհ սուդ ջամբեաց . . .
Ո'չ գոյ իմաստնոց հաց , ո'չ հանճարեղաց ,
Ո'չ ընթացք թելեւաց , եւ ոչ մարտ զօրաց ,
Քանդի դիսուածք բախտի են հասարակաց .
Ունայնութիւն ունայնութեանց , ամենայն ինչ ընդունայն»³² ,

ողբում է Գրիգոր Օշականցին կեանիք ունայնութեան գաղափարի մէջ
արտայայտելով ժամանակի տնտեսական , քաղաքական անարդարու-
թիւնների նկատմամբ ունեցած իր քննադատական վերաբերմունքը :

«Զօրացո՛ զիս , Տէ՛ր , զօրութիւն իմ ,
Եւ զէն զինաւորութեան իմոյ ,
Ի հանդէս մարտի այսր յատենի ,
Արիապէս ճակատամարտիլ
Ընդ այսս չարութեան
Եւ յաղթել քաջապէս օդոյս
Իշխանին հակառակութեան»³³ ,

աղերսում է Պ. Նախիջեւանցին երկնալին թաղաւորին՝ չարի դէմ
մաքառելու ոյժ եւ կարողութիւն ներարկելու բանական գոյլին :

31. Մատենադարան , Երևան , Զեռ . Թիւ 828 , Թէրթ 148ա :

32. Մատենադարան , Երևան , Զեռ . Թիւ 6682 , Թէրթ 11ա : Հ. ՀԱՄԱՁԱՍՊ ՈՍԿԵԱՆ ,

Զորս հայ տաղասացներ եւ անոնց տաղերը , Վիւնաս , 1966 , էջ 109 :

33. Մատենադարան , Երևան , Զեռ . Թիւ 10 , Թէրթ 19ի :

Պետրոս Նախիջեւանցու Աղօքական բանի ընդ Աստուծոյ ի խորոց սրտէ պրտարեկ զգջմամբ . . . վիթխարածաւալ քնարական պոէմը հարուստ է զբարարակեղու բարձրաբռւեստ բանաստեղծական նման միաւորներով։ Այս առումով ուշադրու է նաև Մովսէս Կարնեցու երգ երգոց, կրօնափիլիանոփայական, քնարական, ընտիր բանաստեղծութիւնը, որ ձեռագրերում վերագրուել է՝ մերթ Մովսէս Խորենացուն, մերթ էլ Միքիթար Սեբաստացուն։ «Ո՞չ այնքան դիւրահասկանալի ամենից» կամ միջին պարզութեամբ գրաբարարակեղու այս բանաստեղծութիւնները ստեղծուում են առաւելապէս մտաւորական չերտերի, զբագէտ լայն խաւերի համար եւ գեղագիտական բաւականութիւն պատճառելու հետ միասին հետապնդում են շատ որոշակի զաղափարական նպատակներ։ Պ. Դպրի խոհական, փիլիսոփայական, կրօնական-առդային բովանդակութեամբ բանաստեղծութիւնների մի զգալի մասը հիւսոււած են «ոչ այնքան դիւրահասկանալի» միջին պարզութեամբ գրաբարով։

«Որք բընախօս բանիւ զէակըս ենթագրեցին,
Ամենայն չար գոլ տանջելի ճշմարտեցին,
Ոչ ոք տանջեալ անապական վերաբերին,
Զի յեղյեղուկ բընութեամբ է ըստ իւր գոյին։

* * * * *

Որք ներհականք ոչ ինչ իրօք հաւասարին,
Որպէս ճերմակն ոչ ունի ինչ հանգէտ աեւին,
Արդ, բարութեան գոյացութիւն անեղն ասի,
Բայց յանեղչն եղանակաց ոչ պատկանի։

Քանդի բարի թէպէտ բազմաց ողեալ լինի,
Բայց բարութիւն հազիւ կամ բնաւ ոչ ենթագրի,
Իսկ բարույն չարն է ընդդիմակ, որ ներհակի,
Ապա ուրեմն, ոչ ինչ ի յայն այս դըտանի»³⁴։

Պաղտասար Դպիրը մեկնարանում է Դաւիթ Անյաղթի «Զարն ոչ է անեղ» հռչակաւոր բանաձեւը, վերաբարձելով այն ճշմարիտ հայեացքը, որ չարի, անարդարութիւնների դէմ պայքարելու լաւագոյն միջոցը՝ զիսութիւնն է, գիտութեան միջոցով կեանքը, իրականութիւնը ճանաչելու, հասկանալու եղանակը։

34. Գիրք Սահմանաց ԴԱԿԻԹ ԱՆՑԱՂԹ ՓԻԼՍՈՓԱՅԻ ԵՒ ԱՍՏՈՒԱՆԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ, Պոլիս 1731, էջ 319, 320։

«Հաւոյն մեծի համանըման ծընօդք աղդիս ապօանազեան,
եւ կըրկնակի արեգակունք հոգուց մերոց ի խոր մըթան.
Անդիտուլթեան գլշերն ի ձէնջ ի ապառ եղեւ հալածական,
եւ խաւարութք լուաւուրեալք՝ նոր ի նորոյ պայծառացան:

Ըղկարդ, ըգձեւ եւ ըրտեսակ բարօրութեան ի Հայաստան
Հաստատեցիք տնօրինարաք՝ գուն դործելով մինչ ի վախճան.
Համբաւ բարեացն ի ձէնջ եհաս առ արքունիան ի Յունաստան,
Առ որ սուրբ հարքն ընդ իշխանաց ուրախ եղեն եւ բերկրեցան:

Աստուածակիր սուրբ թարգմանիչք եւ խաչազարդ ամոքք Հայոց,
Հեղաքայուն ջուրք վըտակաց եւ քաղցրալուր հընչմունք գետոց.
Դուք արշալոյսք մեղ ներհեղիչք, զըւարթարար ընտիր ցօդոց,
ի հնութենէ նոր նորովիչք, պայծառ զարդուք աստուածայնոց»³⁵,

Ներբողում է Պետրոս Ղափանցին Հայոց թարգմանիչներին, ժամանակակից սերունդներին նրանց օրինակով ոգեւորելու նպատակով:

ԺԼ. դարում գասական հայերէնի գաղտնարանները ներփուժելու, նրա բարդութիւնները, գիտուարութիւնները յաղթահարելու, գըրաբարասէրների միտքը մարզելու նպատակով ատեղծում են նաեւ խրթին, «ոչ ամենից, այլ միայն պիտոնց» հասկանալի արձակ եւ չափածոյ ատեղծագործութիւններ: Սա նոյնապէս նոր երեւոյթ է: Յայոնի է, որ Գրիգոր Մագիստրոսը իրթնաբարբառ այնպիսի բանաստեղծութիւններ է մեղ թողել, որ մինչեւ օրս էլ գետ վերծանւում են: Յայտնի է, որ Նարեկացու «Մատեան»ը եւ ատերը լիցուն են խըրթին սողերով ու հաստուածներով եւ որ Գէնց այդ պատճառով անցեալում այնքան մեկնութիւններ եւ լուծմունքներ են գրուել: ԺԼ. դարի իրթնաբան երգերի նշանաւոր հեղինակներն են՝ Պարտասարդ Դպիրը, Գրիգոր Շիրվանցին, Հ. Մատթէոս Գարագաշեան Եւղոկիացին եւ այլք: Այդ կարգի երգերը ամենալաւ գրաբարագէտին անդամ մղում են դէպի բառարանները.

«Տիպ այնմ եղեր պայծառագոյն,
Որ ներ փւրոցն է յոյժ յարգոյն,
Զոր մի արար միակ մի դոյն,
Շըրջանակն ձեղուան գոգոյն:

ի նոյն նըկատ շող պատարուն,
Շողշողելով երկրափարուն,

35. Պետրոս Ղափանցի, էջ 306:

Բերես իմոյս երկրի գարուն,
Սառնեալ լերանցն եղեալ տարուն:

Պիտակ միայն հունչ առսկալան,
Ոչ զոր ասեմտ՝ է կերպարան,
Այլ վի՛ ունի զնիւթն իակական,
Հղուաւել վերնոյն փայլման»³⁶:

Պաղտասար Դավիրը վարժութեան նպատակով իր Բարեւագիրքում ներկայացնում է նաեւ խրթնաբանութեան յատուկ քնազրեր: Հ. Մ. Գարագաշեանի «Քնար քերուր հոգետաւիդ» սկսուածքով բանաստեղծութիւնը, որով գարդարուում է Մ. Սերաստացու մարմարեայ ջրմաքարը, այնքան լիրիթին է, որ ժամանակակից գրարարագէտներից՝ Հ. Մկրտիչ Անանեան յատուկ մեկնաբանութիւն է դրեւ:

«Քնար քերուր հոգետաւիդ,
Ներկուր մատին աստուածանիդ,
Աղդեալ Սերաստ մարդին խաւիդ,
Բակերտ Արքայ զուսաշուիդ:

Քատակ մարմնոյ կայտառ ՚և ուղիդ,
Անձառ անհաս խորոց բաւիդ,
Ղամբարք շնորհաց գերշառաւիդ,
Ցայտիչ լուսոյ շռաց շաւիդ:

Բախճան պիտնոց իմաստ աննինջ,
Աղդուր ուսաւ ինքնին անջինջ,
Խմբից ուսոյց քիւրուց առինչ,
Օճան ոգւոց ըըտաց շրուինչ: ...»³⁷:

Գրաբարի տարաստիճան զարգացման այս ընթացքին համակշիռ, ԺՀ- գարում, ինչպէս արդէն նկատեցինք, լուրջ քայլեր են արւում նաեւ նոր գրական հայերէնի՝ գրական աշխարհաբարի զարգացման համար: Այս խնդիրը վիճաբանութեան առիթ չի տալիս: Սրեւմտահայ եւ արեւելահայ գրական նոր հայերէնի հարցերին նուիրուած լեզուաբանների վերեւում յիշատակուած աշխատութիւններում, հանդամանօրէն ներկայացւում է նոր գրական հայերէնի ակդրմաւորման

36. Պաղտասար Դավիր, Հրա. Շ. Ա. ԶԱՅԱՐԵԱՆ - Ա. ՄԱՆՅԱԿԱՆԵԱՆ, Երեւան, 1958, էջ 130:

37. Հ. ՅՈՎՃԱՆՆԵՍ Վ. ԹՈՐՈՍԵԱՆ, Վարք Միլիքարայ Արքայի Սերաստացւայ. Վենետիկ, 1901, էջ 417:

38. Տես Հ. և. Ձերքիններ, Հայ քառորդի սկզբանայի երրորդ և հայ վերածնութիւնի շարպանական մասնակի. 1975, էջ 19-22:

նար մի ընդհանուր գրական բարբառ»³⁹ : Նալեանի Զեն հոգեւոր գրքի աշխարհաբարի մասին լէոյի յայտնած այս կարծիքը հաստատում է Յ. Նալեանի գրչին պատկանող նրա գրական աշխարհաբարով չարադրուած արձակ եւ չափածոյ հարիւրաւոր երկերի գոյութեան փաստով: «Քանդի - գրում է նա - այսու աշխարհաբար եւ զիւրիմաց չարադրութեամբ, բայց համարեցաց յիմաստնոց անգունիլ, քան թէ պարզամտաց ընթեռնուր եւ ոչ իմանալ»⁴⁰ : Ահա թէ ինչո՞ւ Նալեանն իր Գիրք որ կոչի Գանձարան ծանուցմանց հանրադիտական կարգի աշխատութիւնը (տպագրուած 1758 թուին) կանխորչում է շարադրել «ցրաքան եւ աշխարհաբարո ոճիւ»: «Յառաջնումն... գտանին հարկաւոր գրաքան եւ աշխարհաբարո ոճիւ»: «Յառաջնումն... գտանին հարկաւոր գրաքան եւ աշխարհաբարո ոճիւ»:

30. 1b0. 82. hum., ♂ 950-951 (unbr. & L. 12):

40. ԱՆԿՈԲ ՆԱԼԵՎԱՆ, Գիրք կոչեցնալ Քրիստոնէական ուսամելի, կ. Պողոս, 1747,
էջ 4:

41. ՏԵԱԿՈՒ ՆԱԼԻՆ, Գիրք կոչեցեալ Գամձարամ ծանուցմանց, կ. Պուլիս, 1758, էջ 1:
42. Անը. Էջ 3, 5:

բասանաց հոչակաւոր է, իսկ առ իմաստութեան ուսմունա՝ չքաւոր . . . : Ո՞չ գիտեմ, ո՞վ ես դու որ զայդ ասես, բայց ասեմ եւ իցես, վա՞յ քեզ եւ եղուկ հազար, եւ ի՞նչ զարար ունի աղջկանց սուրբ գրոց կըրթութիւնն . միթէ նոքա իմացական հոգի չունի՞ն մի, կամ թէ չե՞ն կարեր ընդունակ լինի զիտութեան գրոց . մէկէր նոքա մայմունի՞ սոյ են՝ որ զտեսածն միայն ուսանին՝ իլիկ մանել, քէրկէֆ բանիլ, տուն աւելել, լաթ լուանալ, ծութ ծամել, եւ այլ այտպիսի անբան արհեստք ի կիր առնուլ . . . Մի՞թէ չարժէր գրոց գիտութիւնն քան զմէկ իջիկ մանել, եւ ո՞չ թէ մեք զիլիկ մանելն մէն անել կամմիք ի նոցանէ . հէմ զայն թող ուսանին, հէմ զայն, միթէ արքն ձեզ կարդալ գիտենալով՝ ուրիշ զէնահաթ չե՞ն մի սորվեր . . . Վասն որոյ աղաչեմ, թէ եւ աճայիպ եւ անսովոր երեւի պատուիրանս, դղստերս ձեր մի՛ արգելուք յուսամանէ սուրբ գրոց եւ ի կարգացնելոյ . . . »⁴³ : Մէջբերենք մի հատուած էլ Յակոր Նալեանի բուն գեղարուեստական արձակից, Վասն գերեաց ազատութեան զրուցատիպ երկից . «Բաէնովրատէս աշակերտն Պղատոնի՝ գնաց առ Անթիպատրոս արքայն վասն աղատութեան գերեաց, եւ արքայն ակրով ընկալաւ զնա եւ աեղան մէճնիս պատրաստեաց : Եւ, երբ որ տավիթ արաւ զիլիխոտիայն յուտել, նա ասաց թէ ո՞ր խոհեմ եւ ողջամիտ ճաշակել եւ ըմպել կամիցի նախքան վազատութիւն ընկերաց իւրոց : Զարմացաւ թագաւորն եւ նոյն ժամայն արձակեաց զգերեալսն : Այժմ եթէ եւ մեք ճաշակել կամմիք յերկնաւոր աեղանոյ մարմնոյ եւ արեան Տեառն, ի՞նչ խղճատանք եւ ինսափ է տեսանել գեղարար մեր գերեալս, եւ կամիցիմք ի մէճնիս նստիլ ընտ Քրիստոնի՝ առանց եղբարց մերոց աղատութեան . . . »⁴⁴ : Այս լնոշհանուր պատուիրը ունեցող գրական հայերէնով, նոր գրական աշխարհաբարով, Յակոր Նալեանը գրել է գեղարուեստական բաղմաններ երկիր : Զարմանալին այն է, որ Նալեանի «շարադրեցեալ գըրաբառ եւ աշխարհաբառ ոճիւ» երկերից զուրս չի մնացել հայոց ներքին կեանքի ու կենցաղի հետ կապուող ոչ մի խնդիր : Մեծ կենցաղագէտ, բարոյագէտ քանաստեղծը, գիտնականն ու ազգային եկեղեցական գործիչը հայ սերունդներին ճանաշման է ներկայացնում հայոց կեանքի, կենցաղի, սովորութիւնների ամենափոքր մանրուք ներից սկսած մինչեւ հայ ժողովրդի հերոսական պատմութեան նըների չափածոյ երդերը, լինեն գրանք գրարար թէ աշխարհաբառ : Յէշնէք մի քանի օրինակ .

43. Անդ, էջ 81, 82, 83 :

44. Անդ, էջ 19 :

**Ալանց սիրոյ բարի գործքն են՝
պատկեր եւ ո՛չ կենդանի·
Ով որ զԱստուած պինքն եւ զընկերն
ո՛չ սիրիցէ՝ մեռանի:**

* * *

**Խոհեմութիւնն է Փէրասէթ,
մարդոյն մախառս բարութիւն.
Ով որ խոհեմ որ վինիցի,
է՛ կատարեալ իմաստուն:**

* * *

**Դի՛ր պահապան ըզգայնութեանց,
թէ որ կամիս ազատիլ·
Մի՛ հետեւիր չար ցանկութեանց՝
թէ չես կամիլ փիւշմանիլ:**

* * *

**Խմաստութիւնն է լոյս մըտաց,
որով հաւատըն փայլի,
Ո՛վ դայս պարզեւ հոգւոյն չունի՝
կո՛յլ է, թէեւ աչս ունի⁴⁵:**

* * *

**Մի՛ լինիր դու մըտօք յիմար՝
և երեւելեօք իմաստուն,
Այլ լի՛ր գիտուն, խոնարհ հոգւով,
արի եւ հեզ եւ արթուն:**

* * *

**Պատուեա՛ ըզծնօղադ յես Աստուծոյ,
որք են երկրորդ քեզ պատճառ.
Որ շատ ապրիս երկար կենօք,
եւ ըստանաս փառս անճառ:**

45. ՅԱԿՈԲ ՆԱԽԵՆ, Գիրք կոչեցեալ Քրիստոնէական ուսանելի, էջ 75, 82, 88, 93:

* * *

Մի՛ ցանկանար օտար մալի,
եւ մի՛ այրիկ անշէջ հըրով.
Զի չես յագիր օտար մալով,
այլ կու մաշխա չար հավէսով:

* * *

Հըպարտն յերկինք որ ելանէ,
երկնից պիլէ չի հաւանիր,
թէ որ խապիլ որ լինէրնէ,
ի դըժոխն առ չէր պարտակուիր⁴⁶:

* * *

Ով ոք սիրէ ղանարու ոսկի,
կարծէ առնել սիրոյն բաւ,
եւ ոչ դիտէ, զի հրդեհի
եւ չիջանի ոչ բնաւ⁴⁷:

* * *

Մեծատանն լիրք բարբառն,
Արք չողոքոզթք վեր հնչեն,
Զաղքատի բանն, որ ոտեայ տառ,
ի թիւր մեկնել՝ չամաչեն⁴⁸:

Նալեանի կրօնական քովանդակութիւն ունեցող երկերի համապատասխան գլուխներն ամփոփող երկտող քառատորդ բանաստեղծութիւնները չեն մնում առակ կրօնական նիւթի ըրջանակներում, այլ արտացոլում են հայոց առջեւ ծառացած քարոյական, տնտեսական, կրթական հարցեր: Առ հասարակ ժԸ. դարի կրօնական եւ աշխարհիկ լաւագոյն երգերը գաղափարապէս համերաշխ են եւ չի կարելի դրանք տարանջատել...: Մէջքերնք մի քանատեղծութիւն եւս՝ այս անդամ հայտառ թուրքերէն անհամար երգերից մէկը, որի հայեցէն թարգմանութիւնը հեղինակը ներկայացնում է զուգահեռաբար:

«Քիմ քի օլա ալչագ կեօնիւլ,
Սինէսինտէ պիթամէ պիր կիւլ,

46. Անդ, էջ 103, 163, 182, 232:

47. Մատենագարան, Երեւան, Զեռ. թիւ 6209, թերթ 31ա:

48. Մատենագարան, Երեւան, Զեռ. թիւ 1016, թերթ 327ա:

Հէր քիմ սէրին պիշտ խոհնճէ,
Հայաթտա օլա՛ ալ ինճէ :

Մաղրուլին տիր խառմի Խիւտա,
Քէրէմտիզ դաղըր տայիմա,
Խւջթիւր սոյնու հէմէն սանեա,
Խար նիմէթ օլմագտըր բէլա» :

«Ո՛վ ոք լինէր խոնարհ հեզ մարդ,
Ի կուրծքն իւր քացուէր մի պարդ.
Որքան ըզգուլին ի կոր առնէր,
Այնու հոտով պկեանս հաւաքէր :

Խակ հըպարտին ոստին Աստուած,
Որ ոչ առնու հոտ ինչ չնորհաց,
Լզպարանոց ըզտու ունի,
Միշտ փուշ ուտել է արժանի»⁴⁹ :

ԺԼ. դարի նոր գրական աշխարհաբարով վեղարուեստական երկերի երկրորդ նշանաւոր հեղինակը Պաղտասար Դակիրն է : Հաւատարիմ դարի լեզուաշխարհարական առաջարիչմ հայեացքներին, նաստեղծում է թէ՛ տարաստիճան գրաբարով, թէ՛ գրական աշխարհաբարով արձակ եւ չափածոյ ատեղծագործութիւններ եւ թէ հայտառ թուրքերէն երգեր : Պաղտասար Դակիրի Բարեւագիրքի ամէն մի նամակ ժամանակի գեղարուեստական արձակի կերպվի նմոյշ է : Դրանք շատ որոշակի գտղափար են տալիս հայ ժողովրդի կեանքի, ապրելակերպի, հասարակ մարդկանց ներաշխարհի, նրանց պարզ ու անկաշկանդ աշխարհայեցողութեան մասին : Մէջքերենք մի կտոր «Ի մօրէն՝ որդւոյն» նամակից : «Շատ աիրով ու շատ կարօտով հարցընեմ գքեղ իմ աչքերուս լոյս Ալիքսան որդի, թէ ինչ հալի վրայ ես ի յօտար երկրիդ ու զարիպ տնակիրդ : Եղուկ իմ այս ծերութեան պահուս, որ քեզնէ կարօտ մնացի : Դրկովս շուրջ եմ ածեր ու կաթնովս եմ սնուցեր ու հիմիկ տեսուտ կարօտ եմ նստեր : Ո՛չ օրս է ինձ օր, ո՛չ դիշերս է գիշեր : Զեմ գիտնար կուշտ ես թէ քաղցած : Յարեւուն պահեցի զքեղ ու ցրտուն ծածկեցի ու հիմիկ չիյտեմ յոր պուճախի կու կենաս ու ինչ հալի վրայ ես : Դու դարիպ ի քո աշխարհէտ ու տընէտ, ես զարիպ ի քո երեսէտ ու քաղցր լեզուէտ : Այն Աստուածն որ ամէնուն կորորմի, ինքն իր ողորմովթենովն մեզ ալ ողորմի, որ դու գաս, քո հասրաթին հասնիս, ու մեր աչքն ի լոյս լինի եւ սրտիս խոցն դուրանայ : Ու թէ դու զմեղ կու հարցընես, իմ աննըման որդի,

49. ԹԱԿՈՒ ՆԱԼԵԱՆ, ԶԷՑ Խոգեւոր, էջ 119 :

Աստծոյ գոհութիւն, ամէնքս ողջ եւ առողջ ենք, եւ քու քաղցրիկ և ըստիս հասրաթ ու կարօտ ենք: Վեց ոսկի եկաւ մեզ հասաւ. Աստուած քու քանիտ դործիստ յաշողովթիւն տայ: Գրիկըտ պակաս չընեա, որ առնենք մեր աչքին քըսենք: Եւ ողջ կեցիր իմ անուշիկ որդիկ Ալեքսան, ամէն: Պետրոս ամուճատ եւ հարաներն տղողմովն շատ բարեւ կ'ընեն: Եւ դրացներըտ եւ այլ բարեկամներըտ շատ բարեւ կանեն: Եւ ամէնքն ըղիսադրիկստ կու հարցընեն բարզում կարօտով⁵⁰: Պաղտասար Դպիկը Բարեւագիրքուա զետեղուա է նաեւ աշխարհաբար, դրաբարային որոշ ձեւերի մէջ, չափածոյ նամակների գեղեցիկ օրինակներ.

«Գալար քարունակ, ոսկի ըմպանակ,
Մեղրածոր վեթակ, հոգւոյս իմ կամով,
Քաղցրիկ օշարակ, իմ ճար ու ճարակ,
Իմ մէկիկ զաւակ, իմ բարձր աշուարակ:

Գովկելի մարգարիտ իմ վայելչագեղ,
Եւ ակն լուսափայլ, գերազնիւ բիւրեղ,
Պարզ եւ յըստակ հայելի աննենդ ի սրտի,
Նոռաբռողբարց մարդ պաժառ բացեալ ի թկի»⁵¹:

«Եւ գեռաբոյս մործիկ է մէջ պարտիզի, Խնձոր նորախայծ, լուսին թէրաբաց, Բաժակ բերկրաբեր, Ժառանդ ծերութէանս, Տանս ճրագ լուսալիր, որդոյս իմ որդի, Աչաց լոյս, ոսկեհատ թռոնեակ սիրելի. Վարդադոյն տիպ քո համբռութեամ»⁵²:

Նոր պրական հայերէնով ժի. դարում տեղծուած բանաստեղծութիւնների մէջ ներթափանցում է նաև Սէբաստացու արտայալ-տութեամբ «աղքատք յիմաստից եւ բարձապարհանք զիտութեանց» մարդկանց դրական աշխարհաբարի զարդացման վերաբերեալ գիտութիւնը։ Կոմիտաս Քեռմիւրճեանը իր բանաստեղծութիւններից մէկի մէջ արտացոլում է պատմական այս իրողութիւնը.

«Այս կաֆայի դուռնովն է, Աստ ես եմ կորուսեալ ոչխարն, Երդօնն յօրինեալ պիտի»:

50. ՊԱՂՏԱՎԱՐ ԴՊԻՐ, Բարեւագիրք, Պուլս, 1752, էջ 83-85:

50. மூலம்

52. Անդ, էջ 97:

Վանկվանկօք ըստորադասն գան .
 Բայց աշխարհաբառ գրելուոյն
 Ջմեղադրունդ լիցիս արգելման ,
 Ի փինաս մտացա մտանց ,
 Զայս ծաղկի մի լեր վայելման»^{53:}

Նոր գրական հայերէնի ուսումնասիրութեան համար առատ նիւթէ է տալիս նաև Յովհաննէս Կարնեցու քնարերգութիւնը , նրա ժողովրդաշունչ քառեակներն ու պոէմները : Սահակ Մանկան նահատակութեան օրերին գրած իր պատմաքնարական պոէմում Յովհէ . Կարնեցին ժողովրդի բերանով անիծում է խարուած , բարոյալքուած մօրը , որը զործակցելով դաւադիրներին , թուրք դահիճների դատապանին է յանձնուած անմեղ ու անբիծ Սահակ մանկանը .

« — Ո՞վ դու անողորմ ծընօղ գարշելի ,
 Դիւահար եւ խենթ , յիմար եւ մոլի ,
 Այսօր նախատինք եղեր յաշխարհի ,
 Դու մըլթանոյ դուստր , զալըմ Փայիշէ ...

— Կին դու , գէշ խոցով պատժիս եւ մաշիս ,
 Բարակ ցաւերով հալիս եւ հաշիս ,
 Վիրացդ հոտերոյն հիւծիս եւ վարշիս ,
 Կայէն , որդեսապան , զալըմ Փայիշէ :

— Կին դու , պատառօղ գաղան քեղ դիսլի ,
 Առիւծ եւ վարագ , արջ քեղ հանդիպի ,
 Գէշ-գէշ պատառեն ըղթեղ եւ գըղեն .
 Եշզիտոյ զաւակ , զալըմ Փայիշէ : ...»^{54:}

Նոյն բանաստեղծը իր ժողովրդական խաղելը , սկրոյ բանաստեղծ՝ ծութիւնները մեծ մասամբ գրում է նոր գրական-ժողովրդական հայերէնով .

«Շէրպէթ տամ քեզ , իըմէ՛ թասերով աղնիւ ,
 Ի՛մ սիրելի , դու զիս սիրահար արիր ,
 Քեզ վա [յե]լ է ճէվահիր թասեր , ո՛վ աղնիւ ,
 Սիրոյդ գինովըն զիս գինեհար արիր :

• • • • • • • • • • • • • • • • • •

53. Մատենադարան , Երեւան , 26ո. թիւ 1675 , թերթ 270թ-271ա .

54. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՑԻ , Տաղարան , Երեւան , 1962 , էջ 28 :

Սիրելուդ յետեւանց կարօտով ընկայ,
Սըրտիկը քոյ տեսոյդ կարօտովըն կայ,
Խեղճ անձն իմ ճամփադ էրկար, ոտովըն դայ,
Սիրոյդ ցաւովըն զիս ցաւադար արիր»⁵⁵:

Յովհաննէս կարոնցին ունի նաեւ հայտառութուրքերէն, դարձեալ ժողովրդաշունչ բազմաթիւ երգեր, ջանդիւլումներ: Եթէ այս բոլորին գումարենք նաղաջ Յովինաթանի, Մտեփանոս Դաշտեցու արդէն ծանօթ ստեղծագործութիւնները, ինչպէս նաեւ նոյն ժամանակնեց մեղ հասած անանուն քանատովների աշխարհնաբար երդերը, որոնք երբեմն տիմալմամբ դիտում են իրեւ ժողովրդական, անգիր ստեղծագործութիւններ, ասպա մենք կ'ունենանք նոր գրական աշխարհնաբարով ստեղծուած մի պատկառելի ժառանգութիւն:

Այսպէս, ուրեմն, ԺԼ. դարում սկսում է հայ լեզուաշխնութեան մի նոր շարժում շարժում, որի նապատակն էր գրական լեզուն՝ իրեւ հաղորդակցութեան միջոց մօտեցնել ժողովրդին: Այդ շարժման գլուխաւոր առաջնորդներն ու տեսաբանները եղան Մ. Մերաստացին՝ Վենետիկոս, Պաղտասար Դպիրը՝ Պոլսում: Լեզուաշխնարարական այս շարժումը խորն ապելեցութիւնն է թողնում նաեւ ժամանակակից գեղարուեստական գրականութեան վրայ: Մտեղծուում են գրաբարային տարաստիճան՝ մեծ մասամբ պարզ, դիւրմբունելի, միջին բարդութեամբ եւ, մասամբ, իրթին գրաբարով գեղարուեստական բազմատեսակ եւ բազմաբովանդակ երկեր: Տարաստիճան գրաբարալեզու երկերին զուգընթաց, երկրորդաբար, ատեղծուում են նաեւ նոր գրական (դարձեալ տարաստիճան) հայերէնով՝ աշխարհնաբարով, ինչպէս նաեւ հայտառ թուրքերէնով տարբեր բովանդակութեամբ գեղարուեստական երկեր: Կոմիտաս Քեռմուրճեանի, Պաղտասար Դպիրի, Յակոբ Նալեանի, Պետրոս Ղափանցու, Պետրոս Նախիջեւանցու, Յովհաննէս կարնեցու եւ այլոց աշխարհնաբար գրական ատեղծագործութիւնները՝ բարձր լեզուների այլուր աշխարհնական պատմութիւնը առաւել խորն ու հանգամանալից ուսումնագրելու համար:

ԺԼ. դարի գրական երկը լեզուաշխնարարական բարդ ու գեղուացին այս ուղին պէտք է անցնէր, որպէսզի ապահովէր հայոց ԺԹ. դարի նոր աղբային լեզուի ու գրականութեան կատարեալ դարդացումը:

Résumé

L'ETAT GENERAL DE LA LANGUE LITTERAIRE ARMENIENNE EN RENOUVEAU AU XVIII^e SIECLE

SOUSANIK NAZARIAN

L'arménien moderne n'est devenu définitivement langue littéraire, reconnu « officiellement » comme tel par les différents noyaux des centres culturels arméniens, que vers les années soixante du XIX^e s. Cette transformation a été cependant le résultat d'un très long processus dont les débuts remontent au bas Moyen Age ou bien à l'époque cilicienne.

L'article prend en examen les conditions générales de cette évolution en marche au cours du XVIII^e siècle. Les artisans principaux du renouveau culturel de l'époque et dont la contribution a été décisive afin de dégager l'arménien populaire de l'état de langue troubadour pour en faire un instrument d'expression cultivée, littéraire ou scientifique, ont été Mxit'ar Sebastaci et ses disciples à Venise, Yovhannēs Bađišec'i, Yakob Nalean et leur école et Pałtasar Dpir à Constantinople, Petros Łap'anc'i, Movsēs Joulayec'i, Grigor Ošakanc'i et d'autres ailleurs, surtout dans les régions historiques de l'Arménie. Tous ces auteurs écrivent normalement en arménien classique, mais ils font en même temps un large usage de l'arménien populaire dans les ouvrages destinés à un public plus vaste. Aussi cette langue qu'ils emploient entre dans une phase décisive de polissage et de perfectionnement. L'article analyse avec minutie les caractéristiques principales de cette langue chez les différents auteurs. Un trait d'un intérêt particulier pour le développement ultérieur de l'arménien moderne c'est que cette langue populaire-littéraire du XVIII^e siècle n'est pas encore affectée par cette dualité qui déterminera, au siècle suivant, la division de l'arménien littéraire moderne en deux expressions principales: orientale et occidentale. La langue du XVIII^e siècle constitue en tout cas une étape fondamentale dans cette évolution.